



ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊՐՈՖ.-ԴՈԿՏ Ե. ՏԵՐ-ՄԻՒՍ.ՍՏԱՆ

ՀԱՌԻՃԱՎԱՆՔԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԹԻՎ

 ատմական գիտությունների թեկնածու, հնագետ Հ. Եղիազարյանը սէջմիածին ամսագրի 1956 թվականի VIII—IX համարում, էջ 79—85, լույս է ընծայել «Հառիճավանքը և նրա վիմագրությունը» վերնագրով Հոդվածը, իսկ նույն ամսագրի 1957 թվականի I համարում, էջ 57—63, տպագրված և նույն հեղինակի ընթերցմամբ, այդ վանքի 28 արձանագրությունները:

Թեև այդ արձանագրությունները մեծ մասմբ հայտնի էին բանասերներին այնպիսի աշխատություններից, ինչպիսիք են Ալիշանի «Երակ»-ը (Վենետիկ, 1881), Ա. Մխիթարյանի «Պատմություն մենաստանին Հառիճավ» (Թիֆլիս, 1856), Մ. Բժշկյանի «Ճանապարհորդության ի Անաստան» (Վենետիկ, 1830), ինչպես նաև Ս. Զալալյանի և Հ. Շահնամունյանի տեղագրություններից և այլն, առնամբ մենայինիվ ողջունելի է Հ. Եղիազարյանի ձեռնարկած դործը իրբե մի ամբողջական ամփոփում Հառիճավ հոչակավոր մենաստանի վիմագրությունների, մանավանդ որ, ինչպես ասում է նա, «այդ բոլոր աշխատություններում ևս կան նկատելի անձտություններ ու սխալներ, մանավանդ վիմագրությունների ընդօրինակման և վերծանման ուղղությամբ»: Ուրեմն, պետք էր սպասել, որ Հ. Եղիազարյանը տալու է մեզ հիշված վիմագրությունների միանգամայն ճշտված և սխալներից զերծ ընդօրինակություններ կամ վերծանումներ:

Սակայն, ոժբախտաբար, Հ. Եղիազարյանը մի քանի առանձնապես կարևոր դեպքերում

ովել է ո՛չ միայն անձիշտ ու սխալ, այլ նույնիսկ միանգամայն անընդունելի ընթերցումներ, որոնք գրավեցին մեր ուշադրությունը և այս փոքրիկ հոդվածի պատճառ դարձան:

Ա) Հ. Եղիազարյանի առաջին խոչոր վրապումը վերաբերում է «երգանիկ ծերության» գրիգոր առաջնորդի տապանագրի տարեթմին:

Հիշատակելով, որ Գրիգորը, վանքը հայուր տարի ավերակ մնալուց հետո, վերահաստատում է այն և հավաքում մեծ թվով միաբանություն¹, համաձայն Ս. Գրիգոր եկեղեցու վրա փորագրված անթվական արձանագրության, Հ. Եղիազարյանն այնուհետեւ շարունակում է. «Մտուդ հայտնի չէ նաև Գրիգորի վահանահայրության ժամանակը: Հառիճավ վանքի պատմությամբ հետաքրքրվող համարյա բոլոր բանասերներն ու տեղագիրները հիմք են ընդունում Հառիճ գյուղում եղած գերեզմանոցում գտնվող մի գերեզմանի տապանագրությունը (Հ. Եղիազարյանի ժողովածուի հետաքրքրությունը), որի տարեթիվը բոլորի կողմից ընդորինակված է ՈՂԴ (1185) թվականը և որի համաձայն դա Հառիճավ վանքի երկրորդ վերաշինության առաջին առաջնորդ Գրիգոր վարդապետի գերեզ-

¹ Համապատասխան արձանագրության մեջ մեծ քավ միաբանություն հավաքելու մասին խոսք չկա, այնտեղ ասված է. «Ես Գրիգոր առաջնորդ սուրբ ուխակի Հառիճայի շինեցի գտեղի սննդեան իմոյ ի Հարթեամեայ կարժանանէն և կարգեցի արս ընտրեալ և խրատեալս աւրինաւըն Աստուծոյ...»

ման է»: Հ. Եղիազարյանը այս եզրակացությունը պարզապես թյուրիմացություն է համարում, «որովհետև, — ասում է նա, — հիշյալ գերեզմանի տապանագրության տարեթիվը՝ ո՛չ թիվը՝ ո՛չ թիվը ՈՂԴ (1185), այլ ՈՒՄԻՅ (1773) թվականն է»: Այսուհետև նա մի անգամ էլ (էջ 82) կրկնում է այս միտքը և հիշյալ գերեզմանը համարում է ԺԵ-զարի երկրորդ կեսին ապրած մի այլ ծերունի Գրիգոր վարդապետի տապանը, որը պետք է Հառիճավանքը վերականգնած լինի ոչ շուտ քան ժի՞դարի կեսերին միայն, երբ «Արևելյան Շիրակը գտնվում էր Վրաստանի տիրապետության տակ»:

Երկրորդ ամայացման մասին է խոսքը: Երկրորդ, բոլորովին անհասկանալի է, թի ինչ տարրերով վյուն կա «Երկրորդ վերաշնուրյան» և «հարյուղ տարի ամայի մնալուց հետո վերաշինման» միջև: ԶԵ՝ որ ինքը Հ. Եղիազարյանն էլ ընդունում է, որ Սեղովկյան արշավանքների ժամանակ, Հատկապես 1064 թվականին, ավերվել և ամայացել է նույն Հառիճավանքը, և 1090 տարի ամայի մնալուց հետո նորից վերաշինվել Գրիգոր վարդապետի կողմից, որին հաջորդել է Պիտրոս վարդապետը: Այդ վերաշինությունը պետք է կատարված լինի, ուրեմն, շորջ 1170-ական թվականներին, որ միանգամայն տակ»:



Նկար 1. — ՀԱՅԻՆԱԼ. ՎԱԼՆԵՐԻ ԱՌԱՋՆՈՒՐԻ ԳՐԻԳՈՐԻ ՇԽՐՄԱՔԱՐԸ

Ամենից առաջ պետք է ասենք, որ երկու Գրիգոր առաջնորդ Հառիճայի ընդունելու պատճառաբանությունը իիստ տարօրինակ է: Հ. Եղիազարյանն ասում է՝ «Թացի այդ (խոսքը տապանագրի թվականի մասին է), տապանագրության մեջ որոշակի ասված է, որ նա վանքի Երկրորդ վերաշինության առաջին առաջնորդն է, իսկ նախորդ արձանագրության մեջ ասվում է, որ վանքը հարյուր տարի ամայի մնալուց հետո նա վերաշինում, շենացնում է. պարզ է, որ դա վանքի առաջին ամայացումն է և ոչ թի երկրորդը, ուստի Գրիգոր առունով առաջնորդները՝ մեկը արձանագրության մեջ, իսկ մյուսը տապանագրության, տարբեր մարդիկ են» (էջ 80—81): Նախ, անհասկանալի է. թե ի՞նչ

համապատասխանում է պատճական իրողությանը և արձանագրական տվյալներին, որովհետև Հառիճայի գերեզմանատանը գտնվող տապանը իրոք պատկանում է վանքի երկրորդ վերաշինության առաջին առաջնորդ Գրիգոր վարդապետին:

Թյուրիմացությունը՝ միանգամբնդիշավ վերացնելու համար այստեղ դնում ենք Հիշյալ տապանի լուսանկարն արձանագրությամբ հանդերձ (նկար 1)²:

2 Այս հոդվածում բերված լուսանկարներն ստացել ենք Հայկական ՍՍՌ Գլուռվյունների ակագեմիայի Պետական պատմական թանգարանից, որի համար շնորհակալություն ենք հայտնում թանգարանի դիրեկտոր պրոֆ.-դոկտ. Կարո Դաֆաղարյանին:

Տաղանագրի թվականը վերջում մի փոքր աղքարտված է, բայց ի թշ (ի թուին Հայոց) առաներից հետո պարզ կարդացվում են Ոլ առաները, իսկ ՌՄ-ի հետք անգամ շկա: Երբորդ տառը Դ է եղել, թե է կամ Թ, այս գեղքում նշանակություն չունի, որովհետև դրանվ կցատիքը միայն Գրիգոր վարդապետի մահվան թվականը՝ 1185, 1188 կամ 1190 թվականին: Մենք ճիշտ ենք համարում վերջինը՝ 1190-ը, ահա թե ինչու:

Գրիգորի հաջորդ Պետրոս վարդապետի առաջին թվագրված արձանագրությունը կրում է ՌիԱ (1192) թվականը, որի մեջ ասված է Կամաւ Աստուծոյ մեք Հառիքնեցիքս Հայր Պետրոս և այլ եղաբարքս սահմանեցաք ի տանի տապանակի ի մատուռն պատարագել զթրիսառս յանուն Գրիգորոյ փոխանակ արգեանց իւրոց...»: Այս արձանագրությունը դունվում է Գրիգորի իրեն արձանագրության (100-ամյա կործանումից հետո վանքը վերաշինելու մասին) ներքելու և լավագույն ապացուց է հիշված բոլոր արձանագրությունների միմյանց հետ կապված լինելուն: Այսպես ուրիշմն, կասկած չի կարող լինել, որ հիշյալ գերեզմանը Հառիճայի երկրորդ շինության առաջին առաջնորդ Գրիգորի կամ, որ նույնն է, իր սննդան աեղին Հարյուրամյա կործանումից հետո վերաշինով Գրիգոր առաջնորդի գերեզմանն է, որի մահից անմիջապես հետո հառիճեցիք Պետրոս առաջնորդի գլխագործությամբ նրա հիշատակը «փոխանակ արդեանց իւրոց» Հարգելու համար պատարագի հատուկ օր են սահմանում: Պիտք է ասել, որ հնագրական տեսակետից էլ այդ տապանը իր արձանագրությամբ չի կարող ժիշտ դարի վերջին պատկանել:

Բ) Հ. Եղիազարյանի երկրորդ և ավելի անհեթեթ վրիպումը վերաբերում է Երեմիա երաժշտի գերեզմանի արձանագրությանը: Մեզ քիչ երաժիշտներ են Հայտնի հայոց պատմությունից և այդ քշերից մեկը Երեմիա երաժիշտն է, որի գերեզմանը դունվում է Հառիճայի մեծ գերեզմանատանը, վերևում հիշված Գրիգոր վարդապետի տապանի կողքին³:

3 Մենք մի երկրորդ երաժշտի գերեզման էլ տեսել ենք Բյուրականում: Այսանդի հին գերեզմանատանը, Աղյոթի և Բյուրականի միջև, մի համարյա կետնին հավասարված տափակ գերեզմանաբար կա, որի վրա այժմ հազվա նշանարկի տառերով դրված է՝ «Եկատանար անկեալ զնի ողորմելի...» (անուն անընթեռնելի). Ճնացել են միայն... ք..իս տառերը) լուսալ ձայնութեամբ քնարս քաղցրաբարբառաւ: Վերջին բառերից պետք է եղակացնել, որ երաժշտի գերեզմանը է այն Արձանագրությունը կարդացնել ենք 1922 թվականի սեպտեմբերին հանգույցալ Գարեգին եպիսկոպոս (Հետագայում Մեծի Տան Կիլիկիո Կաթողիկոս): Հովսեյիանի հետ:

իս, լինելով բնիկ հասիճեցի, տասնյակ անգամներ երկուողածությամբ կանգնել եմ այդ գերեզմանախաչի կողքին, կարդացել եմ նրա վրայի արձանագրությունը և միշտ երեմիա երաժշտին եմ տեսել այդ բարի տակ: 1905 թվականի ամսանը, երբ ես Կոմիտաս վարդապետին հետո տարել էի մեկուկես ամով իմ հայրենի Հասիճ գյուղը՝ նրան մատարիայից բուժելու, մենք երկուսով շատ անդամ այցի ենք զնացել երեմիա երաժշտի:



Նկար 2— ԵՐԵՄԻԱԱ ԵՐԱԺԾՏԻ ԳԵՐԵԶՄԱՆԱՆԱՍՉԸ:

գերեզմանին և ես կարող եմ վկայել, որ մենք երկուսով էլ ամեն անգամ «Երեմիա երաժշտ» էինք կարդում գերեզմանախաչի վրա և Կոմիտաս վարդապետը սաստիկ հուզվում էր ու զգացվում՝ իր նախորդներից մեկին տեսնելով այնտեղ թաղված:


Դրա փայլում ապացուց է այն, որ Կոմիտասը հետագայում իր բանախոսությունների մեջ սրտի խորին հուզմունքով հիշա-

տակել է Արագածի լանջին գտնվող այդ գերեզմանի մասին։

Հոդվածագիր Հ. Եղիազարյանը այս նվիրական շիրիմի տիրոջը բոլորվին ոչնչացրել է և տվել է մի արտառոց վերծանություն, որից բնավ լի հասկացվում, թե ով է հանգչում այդ գերեզմանում։

Տապանագրի ճիշտ ընթերցումն է.

Հ. Եղիազարյանը մեզ համար ամենահայտնի գրքը կան Յ-րդ տողը, որտեղ պետք է մեռածի անունը լիներ, կարգում է «Երեսաւեր Աստուածապաշտի»։ Ուրեմն, մեռածի անունը եղել է «Երեսաւեր», իսկ մականունը՝ «Աստուածապաշտ»։ Ի՞նչպես չի մտածել Հ. Եղիազարյանը, որ ո՞չ երեսաւեր անուն կա և ոչ էլ միայն մի քրիստոնյայի համար



Նկար 3. ԶԱՐԱՐԻ ՍՊԱՍԱԼԱՐԻ ԱՐՁԱՆԱԿՐՈՒԹՅՈՒՆԸ

1. Այս է շիրիմ հան
2. զիստ և բնակարան
3. երեմիաի երաժիշտի
4. որք ընթեռնոյք յաղ
5. աւրս յիշեցէք: Ի ըկ
6. :Զ:է:

4 Տիգրան Կամսարականը «Գոհարին հայ գրականության» ժողովածուի մեջ (Թաստոն, 1916 թ.) նույտասի ելույթներին նվիրված «Հայկական գեղեցկություններ» վերնագրով հոդվածում ասում է. «Եվ եթե օր մը գեղգեղին ու հմային, հուզին և հուզելն առ մը հանգելու համար Հայրենիքի կենսանորոգ կազմույրը երթար փնտուելու ձեզի երկու աղաւանք ունիմ, վարդապետ, նախ մեր կողմանն հարգական հուզյալ խոնարհություն մը ձեր հայտակարագետներն երեմիա երաժշտին շիրիմին առջին, որ հազար երկու տարին ի վեր Արագածի կողը անեղծ ու անվթար պահված է ըստ մեզի զուսպ ինանդաղատանորվ մը...» (էջ 229—230):

կարող էր գործածվել «աստուածապաշտ» մականունը։ Հապա մտաներն ի՞նչ էին։

Ի միշի այլոց, բոլոր բանասերներն էլ այդ գերեզմանախաչի վրա «Երեմիա երաժիշտ» են կարդացել⁵:

Այստեղ թյուրիմացությանն ու թյուրատեսությանը վերջ տալու միակ միջոցը համարում ենք Երեմիա երաժշտի գերեզմանախաչի լուսանկարն իր արձանագրությամբ զնելը, որպեսզի Երեմիա երաժշտի անմաշ անունը գտնե այսուհետև պատահականությունների դռն չգառնա (Նկար 2):

Գ) Կա նաև մի երրորդ թյուրիմացություն, որը նույնպես անհրաժեշտ ենք համարում ուղղել։

⁵ «Ճե՛ս նաև թ. Թորամանյան, «Նյութեր հայկական մարտարապետության պատմության», երկրորդ ժողովածու, Երևան, 1948 թ., էջ 204։

էջ 81-ում, խոսելով Հառիճայի Ս. Աստվածածնի հյուսիսային պատի վրա Զաքարի սպասալարի գրել տված մեծ արձանագրության մասին, Հ. Եղիազարյանն ասում է, թե այդ արձանագրության մեջ Զաքարի սպասալարի Հառիճային նվիրած կալվածների թվում հիշվում է «նաև իր սեփական գյուղը՝ Սառնաղբյուրը, որը շատ մոտ էր գտնվում վանքին»։ Այս ասելուց հետո Հ. Եղիազարյանը գրում է. «Հնագիտական հետազոտությունները հաստատել են, որ Սառնաղբյուրը գտնվում էր վանքից քիչ դեպի հարավ, ձարի ափին, ընդարձակ սարահարթի վրա, որի գերեզմանոցը և շենքերի ավերակների մնացորդները ընդարձակ տարածության վրա պահպանվել են մինչև այժմ»։

Կարծ ու կարուկ ասենք, որ ոչ մի սեփական զյուղ Սառնաղբյուր անուենով չի հիշատակվում մեծ արձանագրության մեջ։ Այստեղ հիշատակված Զաքարի սեփական գյուղի անունը է Մողորիս, որ բանասերներից ամանք համարում են Պարնի (=Պարոնի) գյուղը, որի հարական անունը են այն նույնացնել Սոսուբրուկաղ (=Սառնաղբյուր)։ Կոչված առջյուղի մոտ գտնվող ավերակների հետ, որը շատ մոտիկ չէ վանքին և ընկած է նրանից մոտ 3—4 կիլոմետր հեռավորության վրա։ Այս է բոլորը։

Որպես ապացուց բերում ենք Զաքարի մեծ արձանագրությունը (նկար 3)։

Այս առթիվ առհասարակ պետք է ասենք, որ արձանագրությունների ընթերցումը Հ. Եղիազարյանի կողմից՝ արդարացի կասկածներ է հարուցում։ Մենք ստուգեցինք միայն առաջին երկու արձանագրությունները և դրանք հնալուալը։

Առաջին արձանագրություն։

8—9 տողը չի կարող խորհի լինել, այլ պետք է լինի խոր։

11 տողը աղավաղված է. չի կարող լինել որ կաշառակ հայր մտէ։

Երկրորդ արձանագրությունը բոլորովին աղավաղված է։

3—4 տողը պետք է լինի ի մատուն (ո՞ր թե մի մատուն)։

5—6 տողը չի կարող լինել փոխանակ արդեմն յիմոյ, այլ պետք է լինի փոխանակ արդեմն իւրոց։

Վիմագիր արձանագրությունների ընթերցման ու հրապարակմանը անհրաժեշտ է մեծ զգուշությամբ մոտենալ, հակառակ դեպքում կստացվեն այսպիսի անհեթեթություններ։

Դ) Պետք է ուղղել մի չորրորդ թուրիմացությունն ևս։

Հ. Եղիազարյանը գրում է (էջ 83). «1850 թվականին կազմակերպվում է վանական հատուկ միարանություն, որ եռանդով աշխատանք է ծավալում մենաստանը վերաշինելու, ընդարձակելու և տնտեսապես ուժեղացնելու ուղղությամբ։ Կես զար տեղող իր գործունեության ընթացքում միարանությունը Հառիճավանքը հասցնում է իր ծաղկման և բարգավաճման ամենաբարձր աստիճանին։ Այդ ժամանակաշրջանում է, որ հիմնովին վերանորոգվում են եղած կառուցվածքները, կառուցվում են վանքի միարանության համար բաղմաթիվ քարաշեն երկշարկանի կացարաններ, մասաններ, շտեմարաններ, խոհանոց, սեղանատուն, հացթիւրան, անասնագոմեր և, որ զիսավորն է, հատուկ զպրոցի և կաթողիկոսների ամառանոցի շենքեր և այլն...»։

Խիստ զարմանալի է, որ ձեռքի տակ ունենալով Կարապետ Կոստանդնուպոլիս 1910 թվականին Ալեքսանդրոպոլում հրատարակված «Հառիճայի վանական ընկերության հիշատակարանն ու հաշվեավավելյունը» գիրքը, Հեղիազարյանը այդպիսի սխալ և հասարակությանը մոլորեցնող տեղեկություններ է տալիս։ Հիշված բոլոր վերանորոգություններն ու շենքերի կառուցումը «վանական միարանության» գործերը չեն, այլ Ալեքսանդրոպոլի մի խումբ (8—10) աշխարհական անձերից կազմված ընկերության։ Վկանական միարանությունն բարի բուն իմաստով Հառիճա վանքը չի էլ ունեցել, այնտեղ եղել է մի վանահայր միայն և երբեմն էլ մեկ կամ երկու կրօնավոր։

Ե) Սխալ է նաև, թե Հառիճա վանքը սոսկ գյուղական եկեղեցի է մնացել ի զարի սկզբներից։ Հառիճա վանքը միաժամանակ դյուզական եկեղեցի է եղել Ժիրի զարի եռեսական թվականներից սկսած։

